ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, միասին այսուհետ՝ Կողմեր,

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 56 որոշմամբ հաստատված՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության միանալու միջոցառումների ծրագրի (ճանապարհային քարտեզ) (այսուհետ՝ «ճանապարհային քարտեզ») իրագործման նպատակով,

ելնելով եվրասիական տնտեսական ինտեգրման շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև համագործակցության խորացման և ընդլայնման գործում փոխադարձ հետքրքրվածությունից,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը և նոր պայմաններին նրա տնտեսության հարմարեցման անհրաժեշտությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1
Սույն Համաձայնագրի առարկան

«Ճանապարհային քարտեզով» նախատեսված միջոցառումների, ինչպես նաև 2014 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի դրույթների իրականացումն ապահովելու և եվրասիական տնտեսական ինտեգրմանը մասնակցությամբ պայմանավորված փոխշահավետ

հնարավորությունների արդյունավետ օգտագործման նպատակով Կողմերը կզարգացնեն փոխգործակցությունը հետևյալ ոլորտներում.

- մաքսային վարչարարություն,
- սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցառումներ,
- արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրություն,
- արդյունաբերություն,
- ընդհանուր տեղեկատվական տարածքի կառուցում և ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծում:

Հոդված 2
Կողմերի պարտավորությունները

1. Սույն Համաձայնագրի նպատակներին հասնելու համար Կողմերը՝

ա) իրականացնում են «ճանապարհային քարտեզով» նախատեսված միջոցառումները՝ համաձայն սույն Համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող 1-ին և 2-րդ հավելվածներում նշված ցանկի,

բ) ժամանակին միմյանց տեղեկացնում են սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում առաջացող խոչընդոտների մասին,

գ) ջանքեր են գործադրում՝ սույն Համաձայնագրին համապատասխան աշխատանքներ և միջոցառումներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին համակողմանի օժանդակություն տրամադրելու համար,

դ) իրենց օրենսդրությունների շրջանակներում ձգտում են ապահովել ռուսական և հայկական արտադրության սարքավորումների գնման և օգտագործման առաջնահերթությունը:

2. Ռուսական Կողմը՝

ա) անհատույց կերպով իրականացնում է աշխատանքների կատարման, սարքավորումների մատակարարման, ծառայությունների մատուցման և «ճանապարհային քարտեզով» նախատեսված այլ միջոցառումների ֆինանսավորումը՝ համաձայն սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածների, մինչև 42 մլն ԱՄՆ դոլարի (կամ ռուսական ռուբլիով համարժեք գումարի) և 130 մլն ռուբլու չափով, 3 տարվա ընթացքում՝ սկսած 2015 թվականից,

բ) ապահովում է Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների ուսուցումը և որակավորման բարձրացումը, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածով՝ ներառյալ ճանապարհածախսը և

Ռուսաստանի Դաշնության տարածքում կեցության ծախսերի վճարումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ուսումնական ծրագրերի անցկացման ծախսերը,

գ) սահմանում է ռուսաստանյան գործադիր իշխանության այն դաշնային մարմինների և նրանց ենթակա գերատեսչությունների ցանկը, որոնց հենքի վրա կիրականացվի Հայկական կողմի ներկայացուցիչների ուսուցումն ու որակավորման բարձրացումը,

դ) սահմանում է ռուսաստանյան գործադիր իշխանության այն դաշնային մարմինների ցանկը, որոնք պատասխանատու են աշխատանքների կատարման, սարքավորումների մատակարարման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև «ճանապարհային քարտեզով» նախատեսված այլ միջոցառումների իրականացման համար՝ համաձայն սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի I բաժնի, և Հայկական կողմին տեղեկացնում է ընդունված որոշման մասին:

3. Հայկական Կողմը՝

ա) սույն Համաձայնագրով նախատեսված աջակցության ընդունման նպատակով, սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված ֆինանսավորման շրջանակներում, ապահովում է անհրաժեշտ ենթակառուցվածքի՝ ներառյալ շենքերը, շինությունները, ճանապարհները, հաղորդակցության ուղիները (և այլն) պատրաստվածությունը 1-ին հավելվածի I բաժնի 3-րդ կետում նշված անցակետերում,

բ) ապահովում է աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը և «ճանապարհային քարտեզով» նախատեսված այլ միջոցառումների իրականացումը՝ համաձայն սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի II բաժնի,

գ) ապահովում է սույն հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի համաձայն սահմանված՝ ռուսաստանյան գործադիր իշխանության դաշնային մարմինների լիազորված ներկայացուցիչների մուտքը 1-ին հավելվածի I բաժնի 3-րդ կետում նշված և սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված օբյեկտներ,

դ) սահմանում է ուսուցման և որակավորման բարձրացման նպատակով գործուղվող Հայկական կողմի ներկայացուցիչների ցանկը՝ համաձայն սույն հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի, և այն ուղարկում է Ռուսական կողմին,

ե) ապահովում է սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն ստեղծվող հատուկ աշխատանքային խմբին անհրաժեշտ տեղեկատվության ժամանակին տրամադրումը և նրա ներկայացուցիչների մուտքը 1-ին հավելվածի I բաժնի 3-րդ կետում նշված և սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված անցակետեր,

զ) աջակցում է Հայաստանի Հանրապետության տարածքում ուսումնական ծրագրերի կազմակերպմանը՝ սույն հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն:

Հոդված 3
Ֆինանսավորման կարգը

«Ճանապարհային քարտեզի» իրականացման միջոցառումների ֆինանսավորումը Ռուսական կողմի կողմից կատարվում է հետևյալ կարգով.

մինչև 27,9 մլն ԱՄՆ դոլար Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության կողմից տրամադրվում է Ռուսաստանի Դաշնության գործադիր իշխանության համապատասխան դաշնային մարմիններին սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածների համաձայն աշխատանքների կատարման, սարքավորումների մատակարարման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև այլ միջոցառումների իրականացման համար՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան.

մինչև 130 մլն ռուբլի հատկացվում է Դաշնային մաքսային ծառայությանը Հայաստանի Հանրապետության մաքսային հսկողություն իրականացնող պետական մարմինների կարիքների համար Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան ավտոմոբիլային տեխնիկայի գնման և մատակարարման համար,

մինչև 14,1 մլն ԱՄՆ դոլար Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության կողմից փոխանցվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հաշվին սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության տեղեկատվական համակարգերի ստեղծման, ներդրման և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին և իրավունքի պահանջներին հարմարեցման, ինչպես նաև դիտարկման կենտրոնի և տեսակոնֆերանսների դահլիճների կահավորման, էլեկտրոնային կշեռքների հսկողության կենտրոնացված համակարգի տեղադրման աշխատանքների կատարման նպատակով: Նշված միջոցների ծախսման նկատմամբ հսկողության իրականացման, օգտագործման պայմանները և

կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության միջև համաձայնագրով: Նշված միջոցների ծախսման կարգն իրականացվում է «Գնումների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

Հոդված 4
Հատուկ աշխատանքային խումբը

Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված նպատակների իրագործման նկատմամբ հսկողության համար Կողմերն ապահովում են գործադիր իշխանության շահագրգիռ մարմինների փոխգործակցությունը և Կողմերի ջանքերը համակարգելու նպատակով ստեղծում են հատուկ աշխատանքային խումբ:

Հատուկ աշխատանքային խմբի՝ Կողմերի համապատասխան որոշմամբ հաստատվող կազմում ընդգրկվում է Կողմերից յուրաքանչյուրի գործադիր իշխանության համապատասխան մարմիններից մեկական ներկայացուցիչ: Աշխատանքային խմբի ղեկավարումն իրականացվում է յուրաքանչյուր Կողմից նշանակվող համանախագահների կողմից:

Հոդված 5
Հատուկ աշխատանքային խմբի խնդիրները

Հատուկ աշխատանքային խումբն իրականացնում է հետևյալ խնդիրները.

իրականացնում է սույն Համաձայնագրի իրագործման նկատմամբ հսկողությունը,

Հայաստանի Հանրապետության տարածքում փոխգործակցում է ազգային իշխանության մարմինների հետ,

նախապատրաստում է սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերի պետությունների տարածքներ ներկրվող և Կողմերի պետությունների տարածքներից արտահանվող ապրանքների ցանկերը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հետագա հաստատման նպատակով,

պարբերաբար Կողմերին տեղեկացնում է «ճանապարհային քարտեզով» նախատեսված միջոցառումների իրագործման ընթացքի մասին:

Նշված խնդիրների իրագործման համար հատուկ աշխատանքային խումբը հանդիպում է (անհրաժեշտության դեպքում՝ տեսակոնֆերանսի միջոցով) ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ՝ սկսած սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից:

Հոդված 6
Ապրանքների ներկրումն ու արտահանումը սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում

Սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում Ռուսաստանի Դաշնության տարածքից ապրանքների արտահանումը կատարվում է առաջնահերթ կարգով՝ առանց ապրանքների բացթողման հետ կապված գործողությունների համար մաքսային վճարների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող ապրանքների ցանկերի գծով արտահանման մաքսատուրքերի գանձման:

Սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում Ռուսաստանի Դաշնության տարածք ապրանքների ներկրումն իրականացվում է առաջնահերթ կարգով՝ առանց ապրանքների բացթողման հետ կապված գործողությունների համար մաքսային վճարների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող ապրանքների ցանկերի գծով հարկերի գանձման:

Սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող ապրանքների ցանկերով Հայաստանի Հանրապետության տարածք ներկրվող և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող սարքավորումները, ապրանքները և ապահովման միջոցները ազատվում են մաքսատուրքերից, վճարներից և հարկերից:

Սարքավորումների, ապրանքների և ապահովման միջոցների մաքսային ձևակերպումը կատարվում է պարզեցված ձևով և առաջնահերթ կարգով:

Հոդված 7
Փոփոխությունները և լրացումները

Կողմերը կարող են փոփոխություններ կատարել սույն Համաձայնագրում, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 8
Վեճերն ու տարաձայնությունները

Սույն Համաձայնագրի կիրարկման և (կամ) մեկնաբանման հետ կապված վեճերը և տարաձայնությունները Կողմերը լուծում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 9
Պատասխանատու մարմինները

Սույն Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու մարմիններն են՝

Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը,

Ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարությունը:

Հոդված 10
Եզրափակիչ դրույթներ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից և գործում է մինչև 2018 թվականի հունիսի 30-ը:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2015 թ., 21 Հոկտեմբեր-ի « » երկու բնօրինակով՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝

Ի. Գևորգյան

Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից՝

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության կառավարության և
Ռուսաստանի Դաշնության կառավարության
միջև Եվրասիական տնտեսական միությանը
անդամակցության շրջանակներում
Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական և ֆինանսական
աջակցություն ցուցաբերելու մասին Համաձայնագրի

ՑԱՆԿ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

I. Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական և ֆինանսական աջակցության գծով Ռուսական կողմից իրականացվող միջոցառումներ

Մաքսային վարչարարության ոլորտում

1. Հայաստանի Հանրապետության՝ մաքսային հսկողություն իրականացնող պետական մարմինների կարիքների համար 141 միավոր ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերում:

Սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցառումների ոլորտում

2. Սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության ապահովման նպատակով լաբորատոր բազայի արդիականացում և վերազինում:

3. 7 բուժասանիտարական հսկիչ անցագրային կետերի՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի, «Շիրակ» օդանավակայանի, «Բագրատաշեն», «Բավրա», «Գոգավան-Պրիվոլնոյե» և «Մեղրի» ցամաքային, «Այրում-Ջիլիզա» երկաթուղային հսկիչ անցագրային կետերի, ինչպես նաև 3 անասնաբուժական-սանիտարական հսկիչ սահմանային կետերի՝ «Բագրատաշեն»-ի, «Բավրա»-ի, «Գոգավան»-ի շենքերի, տարածքների և շինությունների կահավորում և նյութատեխնիկական զինում՝ սանիտարա-կարանտինային, անասնաբուժական և կարանտինային բուսասանիտարական հսկողության համար անհրաժեշտ սարքավորումներով և միջոցներով՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 688 և 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշումներով ընդունված միասնական տիպային պահանջներին համապատասխան:

Ապրանքների արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության ոլորտում

4. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության փոխադարձ առևտրի գծով վիճակագրության վարման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում:

II. Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական և ֆինանսական աջակցության գծով Հայկական կողմից իրականացվող միջոցառումներ

Մաքսային վարչարարության ոլորտում

5. Դիտարկման կենտրոնի և տեսակոնֆերանսի համար համակարգի զինում, ինչպես նաև էլեկտրոնային կշեռքների կենտրոնացված հսկման համակարգի տեղադրում:

6. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների մաքսային տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական-ծրագրային միջոցների հարմարեցում, ստեղծում և ներդրում՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին և իրավունքին, ինչպես նաև՝ ընդհանուր մաքսային ընթացակարգերի ներդաշնակեցում:

Սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցառումների ոլորտում

7. Լիազորված մարմինների կողմից պետական սանիտարա-վարակաբանական, անասնաբուժական վերահսկողության և կարանտինային-բուսասանիտարական ոլորտներում ավտոմատացված տեղեկատվական համակարգերի ներդրում և կիրառում, այդ թվում՝ ցանցային և սերվերային տեխնիկայի, կարգավորումների և ծրագրային ապահովման ձեռքբերում:

Արդյունաբերության ոլորտում

8. «Մաքսային միություն - Հայաստան. արդյունաբերական համագործակցության զարգացման հեռանկարները» թեմայով համաժողովի անցկացում:

9. Արդյունաբերական բլոկին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերի, ինչպես նաև ճյուղային ռազմավարությունների նորմատիվ իրավական ակտերի թարգմանություն հայերենից ռուսերեն:

Ընդհանուր տեղեկատվական տարածքի կառուցման և ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման ոլորտում

10. Հայաստանի Հանրապետության պետական տեղեկատվական հատվածի ստեղծում, զարգացում և գործարկում:

11. Եվրասիական տնտեսական միության արտաքին և փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծում և զարգացում:

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության կառավարության և
Ռուսաստանի Դաշնության կառավարության
միջև Եվրասիական տնտեսական միությանը
անդամակցության շրջանակներում
Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական և ֆինանսական
աջակցություն ցուցաբերելու մասին Համաձայնագրի

ՑԱՆԿ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

	Միջոցառման անվանումը	Պատասխանատու մարմին	Սեմինարների քանակը և սովորողների քանակը		Անցկացման վայրը
			2015 թվական	2016 թվական	
1.	Եվրասիական տնտեսական միության տարածքի սանիտարական պահպանման շրջանակներում անցակետերում սանիտարական-կարանտինային հսկողություն իրականացնող մասնագետների ուսուցում	Ռոսպոտրեբնադզոռ	1 սեմինար մինչև 30 մարդ	1 սեմինար մինչև 20 մարդ	ք. Մոսկվա * (Ռուսաստանի Դաշնություն)

Միջոցառման անվանումը	Պատասխանատու մարմին	Սեմինարների քանակը և սովորողների քանակը		Անցկացման վայրը
		2015 թվական	2016 թվական	
2. Լաբորատոր վերահսկողության ցանցի մասնագետների ուսուցում, այդ թվում՝ նոր սարքավորումների տրամաչափարկման և ներածական ուսուցում տեստավորման բարձր ճշգրտության սարքավորումներով աշխատող անձնակազմի համար	Ռոսպոտրեբնադզոռ	2 սեմինար մինչև 27 մարդ (ընդամենը)	2 սեմինար մինչև 20 մարդ (ընդամենը)	ք. Մոսկվա * (Ռուսաստանի Դաշնություն)
3. Եվրասիական տնտեսական միության տարածքի անասնաբուժական և կարանտինային բուսասանիտարական պահպանման շրջանակներում անասնաբուժական և կարանտինային բուսասանիտարական հսկողություն իրականացնող մասնագետների ուսուցում	Ռոսսելխոզնադզոր	1 սեմինար մինչև 30 մարդ	-	ք. Մոսկվա* (Ռուսաստանի Դաշնություն)

*Ռուսաստանի Դաշնության տարածքում սեմինարների անցկացման ժամանակ Հայկական կողմի ունկնդիրների ծառայողական գործուղումների ճանապարհածախսը և կեցության ծախսերը վճարվում են Ռուսական կողմի կողմից: